



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
 ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia  
 հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. փոստ՝ [board@ysu.am](mailto:board@ysu.am), [www.y-su.am](http://www.y-su.am)

№ 002 «29» նոյեմբերի 2021 թ.

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**  
**«Երևանի պետական համալսարան»**  
**հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝**  
**2021 թ. նոյեմբերի 29-ին տեղի ունեցած թիվ 2 նիստի**  
**(հարցման կարգով)**

ք. Երևան

Հարցման կարգով անցկացված նիստին մասնակցել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) 20 անդամներից 14-ը (անդամների ստորագրացուցակը կցվում է):

**Օրակարգում՝**

1. 2020 թ. (հունվար-դեկտեմբեր ամիսներ) ԵՊՀ եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի հաստատում:
2. 2020 թ. ԵՊՀ հիմնադրամի կողմից հրապարակվող գործունեության և ֆինանսական հաշվետվությունների հաստատում:
3. ԵՊՀ 2021-2026 զարգացման ռազմավարական ծրագրի հաստատում:
4. Ֆարմացիայի ինստիտուտում «Դեղերի որակի հսկման և մոնիտորինգի գիտաուսումնական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում:
5. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում «Հոգեբանական աջակցության ուսումնագործական լաբորատորիա» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում:
6. Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության և դիֆերենցիալ հավասարումների ամբիոնների վերակազմակերպում (միավորում):
7. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում «Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում:
8. Սոցիոլոգիայի ֆակուլտետում «Սոցիալական հետազոտությունների ինովացիոն կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում:
9. «Բիզնես ինկուբատոր» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում:

10. ԵՊՀ վարչական համակազմի 2021թ. հաստիքացուցակում փոփոխությունների կատարում:

Հարցման կարող նիստին մասնակցել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 20 անդամներից 14-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների ստորագրացուցակը):

**1. 2020 թ. (հունվար-դեկտեմբեր ամիսներ) ԵՊՀ եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի հաստատում:**

Խորհրդի քարտուղար Ե. Կիրակոսյանի կողմից Խորհրդի 20 անդամներին ուղարկվել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2020 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներ) ԵՊՀ եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի հաստատման քվեարկության թերթիկները: Խորհրդի թվով 14 անդամներ մասնակցել են քվեարկությանը և լրացված քվեաթերթիկները վերադարձրել են Խորհրդի քարտուղարին: Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 22-րդ կետի 2-րդ, 42-րդ կետի 7-րդ ենթակետերով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4. կետի 7-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2020 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:

**2. 2020 թ. ԵՊՀ հիմնադրամի կողմից հրապարակվող գործունեության և ֆինանսական հաշվետվությունների հաստատում:**

Խորհրդի քարտուղար Ե. Կիրակոսյանի կողմից Խորհրդի 20 անդամներին ուղարկվել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2020 թ. ԵՊՀ հիմնադրամի կողմից հրապարակվող գործունեության և ֆինանսական հաշվետվությունների հաստատման քվեարկության թերթիկները: Խորհրդի թվով 14 անդամներ մասնակցել են քվեարկությանը և լրացված քվեաթերթիկները վերադարձրել են Խորհրդի քարտուղարին: Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 22-րդ կետի 2-րդ, 42-րդ կետի 7-րդ ենթակետերով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4. կետի 7-րդ

ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2020 թվականի տարեկան գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունը՝ համաձայն հավելվածներ 2 և 3-ի:

### **3. ԵՊՀ 2021-2026 զարգացման ռազմավարական ծրագրի հաստատում:**

Խորհրդի քարտուղար Ե. Կիրակոսյանի կողմից Խորհրդի 20 անդամներին ուղարկվել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ԵՊՀ 2021-2026 զարգացման ռազմավարական ծրագրի հաստատման քվեարկության թերթիկները: Խորհրդի թվով 14 անդամներ մասնակցել են քվեարկությանը և լրացված քվեաթերթիկները վերադարձրել են խորհրդի քարտուղարին: Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 4-րդ և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4. կետի 4-րդ ենթակետերով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. Հաստատել ԵՊՀ 2021-2026թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը՝ համաձայն հավելված 4-ի:

### **4. Ֆարմացիայի ինստիտուտում «Դեղերի որակի հսկման և մոնիտորինգի գիտաուսումնական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում:**

Խորհրդի քարտուղար Ե. Կիրակոսյանի կողմից Խորհրդի 20 անդամներին ուղարկվել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում «Դեղերի որակի հսկման և մոնիտորինգի գիտաուսումնական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծման քվեարկության թերթիկները: Խորհրդի թվով 14 անդամներ մասնակցել են քվեարկությանը և լրացված քվեաթերթիկները վերադարձրել են խորհրդի քարտուղարին: Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 2-րդ ենթակետերով, Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի 13.05.2021թ. 9/3 որոշումը՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. Ֆարմացիայի ինստիտուտում ստեղծել «Դեղերի որակի հսկման և մոնիտորինգի գիտաուսումնական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանում:

**5. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում «Հոգեբանական աջակցության ուսումնագործնական լաբորատորիա» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծման հարցը:**

Խորհրդի քարտուղար Ե. Կիրակոսյանի կողմից Խորհրդի 20 անդամներին ուղարկվել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում «Հոգեբանական աջակցության ուսումնագործնական լաբորատորիա» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծման քվեարկության թերթիկները: Խորհրդի թվով 14 անդամներ մասնակցել են քվեարկությանը և լրացված քվեաթերթիկները վերադարձրել են Խորհրդի քարտուղարին: Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 2-րդ ենթակետերով, Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների Խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի գիտական Խորհրդի 24.06.2021թ. 11/6 որոշումը՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների Խորհուրդը որոշեց.

1. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում ստեղծել «Հոգեբանական աջակցության ուսումնագործնական լաբորատորիա» կառուցվածքային ստորաբաժանում:

**6. Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության և դիֆերենցիալ հավասարումների ամբիոնների վերակազմակերպման մասին հարցը:**

Խորհրդի քարտուղար Ե. Կիրակոսյանի կողմից Խորհրդի 20 անդամներին ուղարկվել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության և դիֆերենցիալ հավասարումների ամբիոնների վերակազմակերպման և այն ԵՊՀ ֆունկցիաների տեսության և դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի անվանման քվեարկության թերթիկները: Խորհրդի թվով 14 անդամներ մասնակցել են քվեարկությանը և լրացված քվեաթերթիկները վերադարձրել են Խորհրդի քարտուղարին: Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 2-րդ ենթակետերով, Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների Խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի գիտական Խորհրդի 22.04.2021թ. 6/5.4 որոշումը՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների Խորհուրդը որոշեց.

1. Վերակազմակերպել ԵՊՀ մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության և դիֆերենցիալ հավասարումների ամբիոնները:
  - 1.1. Անվանել ԵՊՀ ֆունկցիաների տեսության և դիֆերենցիալ հավասարումների ամբիոն:

**7. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում «Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում:**

Խորհրդի քարտուղար Ե. Կիրակոսյանի կողմից Խորհրդի 20 անդամներին ուղարկվել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում «Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծման քվեարկության թերթիկները: Խորհրդի թվով 14 անդամներ մասնակցել են քվեարկությանը և լրացված քվեաթերթիկները վերադարձրել են Խորհրդի քարտուղարին: Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 2-րդ ենթակետերով, Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների Խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի գիտական Խորհրդի 30.09.2021թ. 1/7 որոշումը՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների Խորհուրդը որոշեց.

1. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում ստեղծել «Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանում:

**8. Սոցիոլոգիայի ֆակուլտետում «Սոցիալական հետազոտությունների ինովացիոն կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում:**

Խորհրդի քարտուղար Ե. Կիրակոսյանի կողմից Խորհրդի 20 անդամներին ուղարկվել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում «Սոցիալական հետազոտությունների ինովացիոն կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծման քվեարկության թերթիկները: Խորհրդի թվով 14 անդամներ մասնակցել են քվեարկությանը և լրացված քվեաթերթիկները վերադարձրել են Խորհրդի քարտուղարին: Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 12, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1:

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 2-րդ ենթակետերով, Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների Խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի գիտական Խորհրդի 30.09.2021թ. 1/6 որոշումը՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների Խորհուրդը որոշեց.

1. Սոցիոլոգիայի ֆակուլտետում ստեղծել «Սոցիալական հետազոտությունների ինովացիոն կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանում:

**9. «Բիզնես ինկուբատոր» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում:**

Խորհրդի քարտուղար Ե. Կիրակոսյանի կողմից Խորհրդի 20 անդամներին ուղարկվել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում «Բիզնես

ինկուբատոր» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծման քվեարկության թերթիկները: Խորհրդի թվով 14 անդամներ մասնակցել են քվեարկությանը և լրացված քվեաթերթիկները վերադարձրել են խորհրդի քարտուղարին: Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 2-րդ ենթակետերով, Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի 11.11.2021թ. 3/2 որոշումը՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. ԵՊՀ-ում ստեղծել «Բիզնես ինկուբատոր» կառուցվածքային ստորաբաժանում:

## **10. ԵՊՀ վարչական համակազմի 2021թ. հաստիքացուցակում փոփոխությունների կատարում:**

Խորհրդի քարտուղար Ե. Կիրակոսյանի կողմից Խորհրդի 20 անդամներին ուղարկվել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի վարչական համակազմի 2021թ. հաստիքացուցակում փոփոխությունների հաստատման քվեարկության թերթիկները: Խորհրդի թվով 14 անդամներ մասնակցել են քվեարկությանը և լրացված քվեաթերթիկները վերադարձրել են խորհրդի քարտուղարին: Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 6-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 6-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2021 թվականի վարչական համակազմի հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

«Սոցիալական հետազոտությունների ինովացիոն կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման վերաբերյալ Խորհրդի անդամ Ս. Հայրոջյանը որոշ դիտարկումներ է արել, ըստ որ կենտրոնի կանոնադրության տեքստում կան ձևակերպումներ, որոնք չեն համապատասխանում կառուցվածքային ստորաբաժանման պայմաններին՝ մասնավորապես Հոգաբարձուների խորհրդի կամ «անձամբ» ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դրույթները: Ըստ Ս. Հայրոջյանի, անհասկանալի է նաև առաջարկվող հաստիքացուցակը, որում նախատեսված են 3 ղեկավար պաշտոններ, սակայն 0 հետազոտողի պաշտոն: Հաշվի առնելով, որ այն լինելու է ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանում, այլ ոչ թե առանձին իրավաբանական անձ, ուստի Ս. Հայրոջյանն առաջարկել է վերանայել կանոնադրությունը և այն ներկայացնել հաստատման հաջորդ նիստին:

Խորհրդի անդամ Կ. Թռչունյանն առաջարկել է, որ այն բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները (Հարց 4, 5, 7, 8), որոնք առաջարկվել են ստեղծել ԵՊՀ գիտական խորհրդի կողմից պետք է հետագայում մշակեն և ունենան համապատասխան կանոնադրություն՝ համահունչ ԵՊՀ կանոնադրությանը:

Խորհրդի անդամ Ն. Խաչատրյանը նույնպես անդրադարձել է ստորաբաժանումների կանոնադրությունների հետ կապված հարցին և հավելել, որ ներկայացված չէր «Հոգեբանական աջակցության ուսումնագործնական լաբորատորիա»-ի ստեղծման հիմնավորումը:

ԵՊՀ Հոգաբարձուների խորհրդի ուսանող անդամները նիստի և հարցերի վերաբերյալ արտահայտել են կարծիք, որը կցված է արձանագրությանը:

**Խորհրդի նախագահ՝**

**Ս. Պապիկյան**

**Խորհրդի քարտուղար՝**

**Ե. Կիրակոսյան**

Յոգաբարձուների խորհրդի հարգելի անդամներ, մենք՝ հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ նաև ՀԻ) ուսանող անդամներս, հավատարիմ մնալով ՀԻ նախորդ նիստին կայացրած որոշմանը, չենք մանակցում քվեարկություններին, քանի որ համարում ենք, որ ՀԻ ներկայիս կազմը ձևավորվել է ընթացակարգային խախտումներով, և այս կազմի կողմից ընդունված որոշումները ոչ իրավաչափ են:

Կարևոր ենք համարում նաև նշել, որ նախորդ նիստին ընդունված որոշումը, այն է՝ ստեղծել հանձնաժողով՝ հանձնարարելով վերջինիս պարզել ընթացակարգային խնդիրների առկայությունը, խնդիրների հայտնաբերման դեպքում մինչև ՀԻ հաջորդ նիստը համապատասխան քայլեր ձեռնարկել այդ խնդիրները վերացնելու համար, ըստ եռօրյան չի իրականացվել, քանի որ ուղարկված օրակարգում նշված հարցին որևէ անդրադարձ չկա:

Չնայած վերոշարադրյալ հանգամանքին՝ ՀԻ ուսանող անդամներս, կարևորելով ուսանողների կողմից բուհի բարձրագույն կառավարման մարմնում որպես ուսանողության ներկայացուցիչ առաջադրված լինելու պատասխանատվությունը, անհրաժեշտ ենք համարում բարձրաձայնել այն մտահոգությունները, որոնք կապված են ուղարկված օրակարգի հետ.

1. Նախ մինչև առաջադրված օրակարգային առանձին հարցերի քվեարկությանը անցնելը պետք է խորհրդի անդամներին հնարավորություն տրվեր առաջարկություններ հնչեցնելու օրակարգի վերաբերյալ, որին պետք է հաջորդեր խորհրդի կողմից օրակարգի հաստատումը (ինչը բխում է ՀԻ աշխատակարգի 6.1 և 6.2 պահանջներից):
  2. «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածը առանձնացնում է Հիմնադրամի ՀԻ իրավասությունները, ի կատարումն որի ԵՊՀ կանոնադրության 42-րդ կետի 4-7-րդ ենթակետերով, ի թիվս այլ լիազորությունների, որոնք ունի ՀԻ-ն, առանձահատուկ կերպով շեշտադրվում են այնպիսի կարևոր նշանակության հարցերի շուրջ որոշումների կայացումը, ինչպիսիք են՝ ռեկտորի հաշվետվության լսում և գնահատում, ԵՊՀ գործունեության տարեկան և ռազմավարական գործունեության հաստատում, ԵՊՀ կառուցվածքային փոփոխությունների, հաստիքացուցակի, ինչպես նաև ԵՊՀ տարեկան ֆինանսական հաշվետվության հաստատում:
- Հարկ ենք համարում ընդգծել, որ ս.թ. նոյեմբերի 29-ին հարցման կարգով անցկացվելիք նիստի օրակարգում ընդգրկված են վերոշարադրյալ ենթակետերում ամրագրված բոլոր հարցերի շուրջ որոշումների կայացումը:

Չնայած այն հանգամանքին, որ հարցման կարգով անցկացվող նիստերում քննարկվելիք հարցերի շրջանակը հստակեցված չէ ԵՊՀ կանոնադրությամբ,



սակայն միևնույն ժամանակ կանոնադիրը, ՀԽ իրավասությունների շրջանակում առանձնացնելով իրենց բովանդակությամբ առանձնահատուկ նշանակություն ունեցող հարցերի հաստատումը՝ հստակ ընթացակարգով, որը ոչ միայն ենթադրում է հարցի ձևական հաստատում, այլև ԵՊՀ կանոնադրական պահանջով՝ լսում և գնահատում, ինչը ներառում է նաև հարց-պատասխան, կարծիքների փոխանակում, առարկությունների և դիտողությունների ներկայացում, օբյեկտիվորեն կարող ենք փաստել, որ բովանդակային կողմի ապահովմամբ լսում, գնահատում և/կամ հաստատում իրականացնելու վերոշարադրյալ գործիքակազմի կիրառումը չի կարող երբևէ կյանքի կոչվել հարցման կարգով գումարվող նիստերի ընթացքում, հետևաբար վերոշարադրյալ հարցերի քննարկումը ուղղակիորեն անհամատեղելի է հարցման կարգով նիստի անցկացման ֆորմատի հետ, ավելին՝ այդպիսով խախտվում են ՀԽ անդամների իրավունքները և օրինական շահերը:

3. Կառուցվածքային նոր ստորաբաժանումների ստեղծման վերաբերյալ օրակարգային հարցերի հիմնավորման փաթեթները թերի են: Մասնավորապես՝ ԵՊՀ Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի և դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի միավորման, ինչպես նաև Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում «Հոգեբանական աջակցության ուսումնագործական լաբորատորիա» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծման վերաբերյալ հիմնավորումները բացակայում են:
4. ԵՊՀ 2021-2026 թթ զարգացման ռազմավարական ծրագրում ներկայացված ցուցիչներից շատերը չեն արտացոլում որակական և քանակական հստակ ցուցանիշներ, ինչը հետագա տարիներին առաջացնելու է խնդիր՝ ռազմավարական ծրագրի կատարողականը օբյեկտիվորեն գնահատելու համար:

Դավիթ Ափոյան  
Խաչիկ Աբաջյան  
Գոռ Օհանյան  
Հասմիկ Վարդումյան  
Դավիթ Աքեյան